

Հուլայական տնտեսության պայմաններում տնտեսական որոշումներ ընդունելու պարտականությունը եւ դրանց հետեւանքների պատասխանատվությունը անմիջապէս ընկնում են տնտեսավարող սուբյեկտների վրա: Ինչպէս զարգացած շուկայական տնտեսություններում, այնպէս էլ անցումային տնտեսություններում ձեռնարկությունները ստիպված են որոշումներ ընդունել ռիսկի առկայության պայմաններում: Անցումային տնտեսություններում ձեռնարկությունները նաեւ վարչաիրամայական համակարգից մնացած՝ «ժառանգված» ռիսկի ազդեցության տակ են: Դա, բնականաբար, էապէս դժվարացնում է հիմնավորված արդյունավետ որոշումների ընդունումը:

Այդ իսկ պատճառով շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունն անհնար է կառավարել առանց ռիսկի ազդեցությունը հաշվի առնելու, իսկ արդյունավետ կառավարման համար կարեւոր է իմանալ ոչ միայն ռիսկի գոյության մասին, այլ նաեւ ճիշտ նույնականացնել կոնկրետ ռիսկը: Ֆինանսատնտեսական գործունեության կարեւոր կանոններից մեկի համաձայն. «Պետք է ոչ թէ խուսափել ռիսկից, այլ ձգտել նվազեցնել այն՝ հասցնելով հնարավոր առավել ցածր մակարդակի» [1]: Իսկ վերջինը պահանջում է ձեռնարկատիրական ռիսկերի ճիշտ կառավարում:

Ձեռնարկատիրական ռիսկի կառավարումը ենթադրում է համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են ձեռնարկատիրական սուբյեկտի վրա անցանկալի ներգործությունների վաղորդ կանխատեսմանը եւ բացահայտմանը, ինչպէս նաեւ դրանք չեզոքացնելու համար միջոցառումների մշակմանն ու իրականացմանը [2]: Ռիսկի կառավարման գործընթացի հիմնական փուլերը կարելի է ներկայացնել գծապատկեր 1 -ի միջոցով:

Ձեռնարկատիրական ռիսկի վերլուծության համար անհրաժեշտ է առաջին հերթին արագ եւ հավաստի տեղեկատվություն: Ինչպէս նշել է Գերմանական հետազոտական ընկերության պրոֆեսոր Յիբերտ Մարկլը. «XXI դ. առավել խիստ մրցակցության պայմաններում, ինչը պայմանավորված է շուկաների գլոբալացմամբ, հաղթանակ կտանեն ոչ թէ խոշոր ձեռնարկությունները փոքրերի նկատմամբ, այլ իրավիճակի փոփոխությանը դիմամիկ արձագանքող ձեռնարկությունները դանդաղ արձագանքող ձեռնարկությունների նկատմամբ» [3]:

Ռիսկը գնահատելու եւ համապատասխան որոշում ընդունելու համար անհրաժեշտ է հավաքել նախնական տեղեկություններ ռիսկը կրող օբյեկտի վերաբերյալ: Այս սկզբնական փուլը կոչվում է «ռիսկի բացահայտում» եւ ներառում է երկու ենթափուլ՝ օբյեկտի կառուցվածքի մասին տեղեկությունների ընտրություն եւ վտանգների կամ միջադեպերի բացահայտում [4]:

Արտադրական օբյեկտի մասին ելակետային տեղեկություններ ստանալու հիմնական մեթոդների թվին են դասվում.

- ✓ ստանդարտ հարցումային թերթիկը,

✓ ֆինանսական եւ կառավարչական հաշվետվությունների սկզբնական փաստաթղթերի վերլուծությունը եւ քննարկումը,

✓ նամայակային եւ տարեկան ֆինանսական հաշվետվությունների տվյալների վերլուծությունը,

✓ ձեռնարկության կազմակերպական կառուցվածքի դիագրամների կազմումը եւ վերլուծությունը,

✓ արտադրական պրոցեսների տեխնոլոգիական հոսքերի քարտեզների կազմումը եւ վերլուծությունը,

✓ արտադրական ենթաբաժինների տեսչական այցերը, տվյալ տեխնիկական ճյուղի մասնագետների խորհրդատվությունը,

✓ խորհրդատվական ֆիրմաների կողմից փաստաթղթերի փորձաքննությունը:

Երկրորդ փուլում իրականացվում է ռիսկի գնահատում: Տնտեսագիտության տեսության մեջ եւ տնտեսական ռիսկերի կառավարման պրակտիկայում տարբերում են ռիսկի գնահատման երկու մեթոդ՝ որակական եւ քանակական [5]: Տնտեսական ռիսկի որակական գնահատականը լրացվում է քանակական գնահատականով: Վերջինը շատ կարեւոր է, երբ առկա է կոնկրետ կառավարման որոշում ընտրելու հնարավորություն այլընտրանքային տարբերակների ամբողջությունից:

Գործնականում ռիսկի որակական վերլուծության համար ավելի հաճախ օգտագործվում է փորձագիտական մեթոդը, որը հիմնվում է գործունեության սպասվող պարամետրերի սուբյեկտիվ գնահատականների վրա: Այդ սուբյեկտիվությունը պայմանավորված է այն բանով, որ ռիսկի վերլուծությամբ զբաղվող փորձագետներն արտահայտում են իրենց սուբյեկտիվ դատողությունները՝ ինչպէս նախկին իրավիճակի, այնպէս էլ դրա զարգացման հեռանկարների մասին: Առավել հաճախ այս մեթոդը կիրառվում է այն ժամանակ, երբ տեղեկատվության քանակն անբավարար է, կամ իր նմանօրինակը չունեցող ձեռնարկատիրական գործունեության ռիսկի աստիճանը որոշելու ժամանակ, երբ հնարավոր չէ վերլուծել նախկին ցուցանիշները՝ դրանց բացակայության պատճառով:

Փորձագիտական մեթոդի կիրառման ժամանակ ձեռնարկությունն առանձնացնում է ռիսկերի որոշակի խումբ եւ դիտարկում է, թե դրանք ինչպէս կարող են ազդել իր գործունեության վրա: Դիտարկման արդյունքում տրվում են այս կամ այն տեսակի ռիսկի ծագման հավանականության, ինչպէս նաեւ ֆիրմայի գործունեության վրա դրա ազդեցության բալային գնահատականները: Այս թեմային նվիրված մասնագիտական գրականության համաձայն՝ կա ռիսկի աստիճանի գնահատման հայտնի եւ առավել հաճախ կիրառվող մի քանի մեթոդիկա՝ Շվեյցարական բանկային միության մեթոդիկա եւ BERI մեթոդիկա [6], որոնք հիմնվում են փորձագիտական գնահատականների մեթոդի կիրառման վրա:

Շվեյցարական բանկային միության մեթոդիկայի հիմնական թե-

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՇՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՃՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Հասմիկ
ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՊՀ

տնտեսագիտության
տեսության ամբիոնի
ասիստենտ



Ձեռնարկատիրական ռիսկի կառավարման գործընթացի հիմնական փուլերը



րությունն այն է, որ հաշվի չի առնում ձեռնարկատիրական գործունեության տարբեր ուղղությունների առանձնահատկությունները եւ ռիսկի աստիճանը որոշում է երկրի ամբողջ տնտեսության համար: Այս մեթոդիկայի հիման վրա կարելի է դատել տնտեսության ֆինանսական կայունության, հետեւաբար՝ տնտեսավարող սուբյեկտների գործարար ակտիվության մակարդակի մասին: Այսինքն՝ այս մեթոդիկան արդյունավետ է ֆիրմայի արտաքին տնտեսական գործունեության ուսումնասիրման համար:

Երկրորդ մեթոդիկան մշակվել է գերմանական BERI ֆիրմայի կողմից, ըստ որի՝ հարյուր անկախ փորձագետների հարցումների հիման վրա հաշվարկվում է հատուկ ցուցանիշ՝ ինդեքս, որի միջոցով որոշվում է ռիսկի աստիճանը տնտեսության մեջ: Այս մեթոդիկայով իրականացվող հարցումը կազմված է 15 հարցերից՝ գնահատման չափանիշներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելագույն տեսակարար կշիռը (աղյուսակ 1):

Այս մեթոդիկայի կիրառման ժամանակ տնտեսական աճի տեմպը ներկայացնող ՀԱԱ ցուցանիշը հաշվարկվում է առանձին աստղակով (գծապատկեր 2):

Սակայնակից երեւում է, որ ՀԱԱ-ի տարեկան 3% աճից ցածր ցուցանիշը BERI ինդեքսով գնահատվում է 2.5%, ՀԱԱ-ի 3-6% աճը՝ 5%, 6-10% աճը՝ 7.5%, ՀԱԱ-ի 10%-ը գերազանցող աճը՝ 10%:

Այս մեթոդիկայի համաձայն՝ այն երկրի տնտեսությունը, որի համար հաշվարկված BERI ինդեքսն ունի ավելի բարձր արժեք, առավել կայուն է, հետեւաբար՝ պակաս ռիսկային: Այս մեթոդիկայի օբյեկտիվ թերությունն այն է, որ հաշվի չի առնում այն ռիսկերը, որոնք կարող են ծագել անմիջապես ֆիրմայի գործելու ժամանակ: Ինչպես նշված առաջին, այնպես էլ այս մեթոդիկան ունի առավել ընդհանուր բնույթ, որի հիման վրա հնարավոր չէ դատել կոնկրետ ձեռնարկատիրական գործունեության ռիսկի աստիճանի մասին, որը ֆիրման պլանավորում է զարգացնել տվյալ երկրում:

Որոշակի ուղղվածություն ունեցող ձեռնարկատիրական գործունեության ռիսկի աստիճանը գնահատող փորձագիտական գնահատականների հատուկ մեթոդիկաները մշակվում են՝ հաշվի առնելով ինչպես տվյալ տնտեսության մեջ ռիսկի աստիճանը, այնպես էլ տվյալ տնտեսավարող սուբյեկտի յուրահատուկ առանձնահատկությունները եւ այն ժամանակա-

հատվածը, որն ընդգրկում է վերլուծությունը:

Ռիսկի քանակական վերլուծությունը ֆիրմայի արդյունավետ կառավարման գործընթացի կարեւոր բաղադրիչներից է: Այս թեմային նվիրված գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայում ռիսկի աստիճանի գնահատման քանակական մեթոդներից առավել տարածված են.

- ✓ վիճակագրական մեթոդը,
- ✓ ծախսերի նպատակահարմարության վերլուծության մեթոդը,
- ✓ վերլուծական (անալիտիկ) մեթոդը,
- ✓ սնալոգների (սմանօրինակների) կիրառման մեթոդը:

● Վիճակագրական մեթոդը լայնորեն կիրառվում է այն դեպքերում, երբ քանակական վերլուծության ժամանակ ֆիրման ունի վիճակագրական-վիճակագրական կարելի տեղեկատվություն՝ վերլուծվող համակարգի անհրաժեշտ տարրերի մասին որոշակի ժամանակահատվածների համար: Այս մեթոդի կիրառման ժամանակ ռիսկի աստիճանն արտահայտվում է սպասվող մեծություններից միջին քառակուսային շեղումով:

Միջին քառակուսային շեղումը (պատահական մեծության հնարավոր արժեքների շեղումը այդ մեծության միջին արժեքից) հաշվարկվում է որպես քառակուսի արմատ դիսպերսիայից [7].

$$\sigma(X) = \sqrt{D(X)}$$

$$D(X) = M\{[X - M(X)]^2\}, \text{ կամ } D(X) = M(X^2) - [M(X)]^2$$

$$M(X) = X_1P_1 + X_2P_2 + \dots + X_nP_n, \text{ որտեղ } \sum_{i=1}^n P_i = 1 :$$

Վերոնշյալ բանաձևերում $\sigma(X)$ -ը միջին քառակուսային շեղումն է, $D(X)$ -ը դիսպերսիան է, $M(X)$ -ը մաթեմատիկական սպասումն է, X_1, X_2, X_n -ը արժեքներ են, որոնք հետագուստվող պարամետրը կարող է ընդունել՝ կախված կոնկրետ պայմաններից, իսկ P_1, P_2, P_n -ը համապատասխանաբար այդ արժեքներն ընդունելու հավանականություններն են:

Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեության իրականացման կոնկրետ պարամետրի մաթեմատիկական սպասումը մոտավորապես հավասար է պարամետրի դիտարկվող (հնարավոր) արժեքների միջին թվաքանակակնին: Բայց մաթեմատիկական սպասումը դեռևս պատահական մեծության լիարժեք բնութագիրը չէ: Օրինակ՝ որպեսզի գնահատվի, թե ինչպես կցրվեն ընտրված պարամետրի, օրինակ՝ շահույթի, արժեքները դրա միջին կանխատեսվող արժեքից (այսինքն՝ մաթեմատիկական սպասումից), նպատակահարմար է դիսպերսիայի կիրառումը, որը հաշվարկվում է որպես շեղման քառակուսու մաթեմատիկական սպասում:

Միջին քառակուսային շեղման տնտեսագիտական իմաստը, ըստ ռիսկերի տեսության, այն է, որ որպես կոնկրետ ռիսկի բնութագիր միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս որոշակի պարամետրի առավելագույն հնարավոր տատանումը դրա միջին սպասվող արժեքից:

Չնայած միջին քառակուսային շեղումը ձեռնարկատիրական ռիսկի բնութագիրն է, բայց հնարավորություն չի տալիս համեմատել գործունեության ուղղվածության ռիսկայնությունը եւ կոնկրետ իրավիճակներն ըստ տարբեր միավորներով արտահայտված կորուստների (օրինակ՝ դրամական միավորներով արտահայտված ֆինանսական արդյունքները եւ արտադրության ծավալը, որը կարող է արտահայտված լինել բնաիրային միավորներով): Ռիսկերի տեսությունը այս հակասությունը լուծում է՝ ներմուծելով վարիացիայի գործակից:

Վարիացիայի գործակիցը (b) հարաբերական մեծություն է, որը հաշվարկվում է որպես միջին քառակուսային շեղման եւ միջին թվաքանակակնի՝ մաթեմատիկական սպասման, հարաբերություն [8].

$$b = \frac{\sigma}{M(X)} :$$

Վարիացիայի գործակիցի օգնությամբ կարելի է համեմատել չափման տարբեր միավորներով արտահայտված հատկանիշների

BERI ինդեքսի գնահատման չափանիշները		Աղյուսակ 1.
N	Գնահատման չափանիշները	Առավելագույն տեսակարար կշիռը (%)
1.	Քաղաքական կայունությունը	12
2.	Արտասահմանյան ներդրումների հետ կապը	6
3.	Ազգայնացման աստիճանը	6
4.	Ներքին արժույթի դեվալվացիայի աստիճանը և հավանականությունը	6
5.	Վճարային հաշվեկշիռի վիճակը	6
6.	Բյուրոկրատիայի զարգացման աստիճանը	4
7.	Տնտեսական աճի տեմպը	10
8.	Արտարժույթի փոխարկելիությունը	10
9.	Պայմանագրերի կատարման որակը	6
10.	Աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության վրա կատարվող ծախսերի մակարդակը	8
11.	Արտաքին և ներքին փորձագետների ծառայություններից օգտվելու հնարավորությունը	2
12.	Չափորոշակային կազմակերպման արդյունավետությունը	4
13.	Տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև փոխհարաբերությունները, կապը հասարակության հետ	4
14.	Կարճաժամկետ վարկերի ստացման պայմանները	8
15.	Երկարաժամկետ վարկերի ստացման պայմանները	8

տատանումները: Այն կարող է փոփոխվել 0-ից մինչև 100%: Ի դեպ, որքան փոքր է այդ գործակիցը, այնքան մեծ է կանխատեսվող իրավիճակի կայունությունը, հետևաբար՝ նաեւ ցածր է ռիսկի աստիճանը, եւ հակառակը՝ որքան մեծ է վարիացիոն գործակիցը, այնքան մեծ է տվյալ միջոցառման կամ գործունեության ուղղվածության ռիսկի աստիճանը:

● Ծախսերի նպատակահարմարության մեթոդը հիմնվում է այն փաստի վրա, որ ձեռնարկատիրական գործունեության ընթացքում յուրաքանչյուր կոնկրետ ուղղության, ինչպես նաեւ առանձին տարրերի ծախսերը ռիսկի միատեսակ աստիճան չունեն: Այսինքն՝ նույն ֆիրմայի գործունեության երկու տարբեր ուղղվածությունների, ինչպես նաեւ գործունեության տվյալ ուղղվածության ներսում, առանձին տարրերի ծախսերի ռիսկի աստիճանը նույնը չէ: Օրինակ՝ թղթախաղերի քիզնետով զբաղվելն առավել ռիսկային է հացի արտադրության համեմատ:

Ծախսերի նպատակահարմարության վերլուծության միջոցով ռիսկի աստիճանի որոշումն ուղղված է ռիսկի հնարավոր գոտիների նույնականացմանը: Այս մոտեցումը նպատակահարմար է նաեւ այն տեսանկյունից, որ հնարավորություն է տալիս բացահայտել ռիսկայնության տեսանկյունից ձեռնարկատիրական գործունեության մեջ առկա «նեղ տեղերը», իսկ հետո մշակել դրանց չեզոքացման ուղիները: Այս մեթոդի կիրառմամբ ռիսկի աստիճանների վերլուծության կուտակված համաշխարհային փորձը վկայում է, որ սման մոտեցման դեպքում անհրաժեշտ է կիրառել ծախսերի աստիճանավորում ռիսկի գոտիներում [11]: Այս մեթոդի առավելությունը հետեւյալն է՝ որոշելով ծախսերի այն հոդվածը, որի ռիսկն առավելագույնն է, հնարավոր է գտնել այն նվազեցնելու ուղիներ: Իսկ հիմնական թերությունն այն է, որ ձեռնարկությունը չի վերլուծում ռիսկի ծագման աղբյուրները եւ ռիսկն ընդունում է որպես ամբողջական մեծություն՝ անտեսելով դրա բաղադրիչները:

● Վերլուծական մեթոդը փոխադարձ կապված մի քանի փուլի կիրառում է: Առաջին փուլում տեղեկատվությունը նախապատրաստվում է վերլուծական մշակման, որը ներառում է.

✓ վճռական նշանակություն ունեցող պարամետրի որոշում, ըստ որի՝ տրվում է ձեռնարկատիրական գործունեության կոնկրետ ուղղության գնահատականը (օրինակ՝ իրացման ծավալը, շահույթի ծավալը, շահութաբերությունը եւ այլն),

✓ ֆիրմայի գործունեության, հետևաբար՝ նաեւ վճռող պարամետրի վրա ազդող գործոնների ընտրություն (օրինակ՝ գնաճի մակարդակը, քաղաքական կայունությունը, ձեռնարկության հիմնա-

կան մատակարարների կողմից պայմանագրերի կատարման աստիճանը եւ այլն),

✓ վճռական նշանակություն ունեցող պարամետրի արժեքների հաշվարկ արտադրական գործընթացի բոլոր փուլերում (գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական մշակման, արտադրության մեջ ներդրման, փակատար արտադրության, գործունեության տվյալ ուղղության դադարեցման փուլերում):

Երկրորդ փուլում կառուցվում են դիագրամներ, որոնք արտահայտում են ընտրված վերջնական ցուցանիշների կախվածությունը նախնական պարամետրերից: Համեմատելով ստացված դիագրամները, կարելի է առանձնացնել այն հիմնական ցուցանիշները, որոնք ամենամեծ չափով են ազդում տվյալ տեսակի ձեռնարկատիրական գործունեության վրա:

Երրորդ փուլում որոշվում են վճռող պարամետրերի կրիտիկական արժեքները:

Չորրորդ փուլում վճռող պարամետրերի ստացված կրիտիկական արժեքների եւ դրանց վրա ազդող գործոնների հիման վրա վերլուծվում են ֆիրմայի աշխատանքի արդյունավետության եւ կայունության բարձրացման հնարավոր ուղիները, հետևաբար՝ նաեւ ռիսկի (որը որոշվում է նախորդ մեթոդներից որեւէ մեկով) աստիճանի նվազեցման ուղիները:

● Անալոզների մեթոդի համաձայն՝ որոշակի ուղղվածություն ունեցող ձեռնարկատիրական գործունեության ռիսկի աստիճանը վերլուծելիս նպատակահարմար է կիրառել անցյալում նմանօրինակ ուղղությունների զարգացման տվյալները:

Առհասարակ ռիսկը կարելի է չափել բացարձակ եւ հարաբերական արտահայտությամբ: Ռիսկի բացարձակ արժեքի հաշվարկը կարելի է կատարել հետեւյալ բանաձևով.

$$W_i = P_i \times b,$$

որտեղ W_i -ն i -րդ պարամետրի ռիսկի բացարձակ արժեքն է, P_i -ն i -րդ պարամետրի պլանային արժեքն է՝ բարենպաստ ելքի դեպքում, b -ն ռիսկի աստիճանի հաշվարկային արժեքն է: Այս հաշվարկի առավելությունն այն է, որ որպես i -րդ պարամետր կարելի է կիրառել մեծ թվով ցուցանիշներ, որոնցով ֆիրման կանխատեսում է վնասները որոշակի ռիսկի կամ ռիսկի խմբերի իրականացման դեպքում:

Համանման ձևով կարելի է հաշվարկել ռիսկի չենթարկվող մասի բացարձակ մակարդակը.

$$L_i = P_i \times (1 - b),$$

որտեղ L_i -ն i -րդ պարամետրի ռիսկի չենթարկվող մասն է, կամ՝

$$L_i = P_i - W_i,$$

Ռիսկի հաշվարկը հարաբերական արտահայտությամբ կարելի է կատարել հետեւյալ բանաձևով.

$$R_i = \frac{L_i}{P_i},$$

որտեղ R_i -ն i -րդ պարամետրի ռիսկի հարաբերական արժեքն է:

Ռիսկի կառավարման երրորդ փուլում ընտրվում է ռիսկի վրա փոխազդելու մեթոդը՝ ապագայում հնարավոր վնասները նվազագույնի հասցնելու նպատակով: Բայց քանի որ կա ռիսկը նվազեցնելու մի քանի մեթոդ, խնդիր է առաջանում գնահատել ռիսկի վրա փոխազդելու մեթոդների համեմատական արդյունավետությունը՝ դրանցից չափագույնն ընտրելու նպատակով [4]:

Կոնկրետ ռիսկերի վրա փոխազդելու օպտիմալ մեթոդների ընտրությունից հետո մշակվում է ձեռնարկության ռիսկերի ամբողջ համալիրի կառավարման ընդհանուր ռազմավարությունը: Այս փուլը որոշումների ընդունման փուլն է. նախ՝ որոշվում են պահանջվող ֆինանսական եւ աշխատանքային ռեսուրսները, հետո ձեռնարկվում է խնդիրը եւ բաշխվում կառավարիչների միջեւ, կատարվում է համապատասխան ծառայությունների շուկաների վերլուծություն, անցկացվում են խորհրդատվություններ մասնագետների հետ:

Կոնկրետ որոշումների ընդունման գործընթացում նպատակահարմար է ռիսկի գոտիների տարբերակումը եւ առանձնացումը՝ կախված ֆինանսատնտեսական գործունեության մեջ հնարավոր կորուստների մակարդակից: Ծախսերի նպատակահարմարության մեթոդի կիրառմամբ յուրաքանչյուր տարրի ծախսերը բա-

Ձեռնարկության գործունեության գոտիները						Աղյուսակ 2.
Ֆիրմայի գործունեության գոտիները	բացարձակ կայունության	նորմալ կայունության	անկայուն վիճակ	կրիտիկական վիճակ	ճգնաժամային վիճակ	
միջին գոտիները	անմիջական	նվազագույն ռիսկի գոտի	բարձր ռիսկի գոտի	կրիտիկական ռիսկի գոտի	անբյուջատրեի ռիսկի գոտի	
առավելագույն կորուստները	վնասի լիովին բացակայություն	գուտ շահույթ	հաշվարկային շահույթ	համախառն շահույթ	իրացումից ստացվող հասույթը և ֆիրմայի ունեցվածքը	
b գործակիցը (%)	0	0-25	25-50	50-75	75-100	

ժամկետով են ռիսկի գոտիների (որոնք ներկայացվում են ընդհանուր կորուստների գոտին), որոնք սահմաններում կոնկրետ կորուստները չեն գերազանցում ռիսկի սահմանված մակարդակի առավելագույն արժեքը (աղյուսակ 2)։

- ✓ բացարձակ կայունության գոտի,
- ✓ նորմալ կայունության գոտի,
- ✓ անկայուն վիճակի գոտի,
- ✓ կրիտիկական վիճակի գոտի,
- ✓ ճգնաժամային վիճակի գոտի:

Դիտարկվող տարրի ծախսերի ռիսկի աստիճանը բացարձակ կայունության գոտում գրոյական է։ Այս գոտին բնութագրվում է կորուստների բացակայությամբ ձեռնարկատիրական այնպիսի գործունեություն իրականացնելու դեպքում, երբ պլանային շահույթի (որի չափը տեսականորեն սահմանափակ չէ) ստացումը երաշխավորված է։

Նորմալ կայունության գոտում գտնվող ծախսերը բնութագրվում են ռիսկի նվազագույն աստիճանով, որն ապահովում է ֆիրմայի բոլոր ծախսերի փոխհատուցումը եւ այնպիսի շահույթի ստացում, որը թույլ է տալիս ծածկել բոլոր հարկերը։

Անկայուն վիճակի գոտին բնութագրվում է բարձր ռիսկով, որի դեպքում կորուստների մակարդակը չի գերազանցում հաշվարկային շահույթի չափը (այսինքն՝ շահույթի այն մասը, որը մնում է ձեռնարկությանը բյուջետային բոլոր վճարումները կատարելուց, վարկերի դիմաց տոկոսները, տուգանքները եւ տուժավճարները վճարելուց հետո)։

Կրիտիկական վիճակի գոտու սահմանագծի վրա, որին համապատասխանում է ռիսկի կրիտիկական աստիճանը, հնարավոր են կորուստներ համախառն շահույթի չափով, որը ձեռնարկության կողմից ստացված շահույթի ամբողջ գումարն է՝ նախքան բոլոր պահումները եւ հատկացումները կատարելը։ Նման ռիսկն անցանկալի է, քանի որ այս դեպքում ֆիրման կարող է ոչ միայն կորցնել շահույթը, այլ նաեւ ամբողջությամբ չծածկել իր ծախսերը։

Անբյուջատրեի ռիսկը, որը համապատասխանում է ճգնաժամային գոտու վիճակին, նշանակում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի կողմից այնպիսի ռիսկի ընդունում, որը ենթադրում է ֆիրմայի տվյալ գործունեության բոլոր ծախսերը չծածկելու հնարավորություն։

Նախորդ ժամանակահատվածների տվյալների հիման վրա վարիացիայի գործակցի (b) հաշվարկումից հետո ծախսերի յուրաքանչյուր հոդված վերլուծվում է առանձին վերցրած՝ նույնակալացվում է ըստ ռիսկի գոտիների եւ առավելագույն կորուստների։ Ընդ որում՝ ձեռնարկատիրական գործունեության ամբողջ ուղղվածության ռիսկի աստիճանը համապատասխանում է այն տարրի ծախսերի ռիսկի աստիճանին, որի արժեքն առավելագույնն է։

Հինգերորդ փուլը ռիսկի վրա անմիջական փոխազդելու գործընթացն է, որն իրականացվում է երեք եղանակով. 1) ռիսկի նվազեցում, 2) ռիսկի պահպանում, 3) ռիսկի փոխանցում։

● Ռիսկի նվազեցումը ենթադրում է կամ հնարավոր կորստի չափերի, կամ անբարենպաստ իրադարձությունների երեւան գալու հավանականության փոքրացում։ Ֆինանսական ռիսկի աստիճանի իջեցման համար կիրառվում են տարբեր միջոցներ.

- ✓ դիվերսիֆիկացիա,
- ✓ ընտրության եւ արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերում,
- ✓ լիմիտավորում,
- ✓ ապահովագրություն (եւ այլն)։

Դիվերսիֆիկացիան ներդրվող ռեսուրսների բաշխման գործընթաց է՝ իրար հետ ուղղակիորեն չկապված օբյեկտների միջեւ։ Կապիտալը բաշխելով գործունեության տարաբնույթ տեսակների

միջեւ, դիվերսիֆիկացիան թույլ է տալիս խուսափել ռիսկի մի մասից։ Դիվերսիֆիկացիայի օրինակ է տարբեր բանկերում ազատ դրամական միջոցներ պահելը։

Ավելի հաճախ դիվերսիֆիկացիան դիտարկվում են որպես արժեթղթերի պորտֆելի կառավարման գործընթացում ռիսկերի նվազեցման արդյունավետ միջոց։ Դրա

հետ մեկտեղ, այս մեթոդն ունի արդյունավետ կիրառման շոշափելիորեն առավել ընդգրկուն ոլորտ եւ կարող է օգտագործվել ձեռնարկատիրական գործունեության տարբեր բնագավառներում՝ արդյունաբերական արտադրության, շինարարության, առետրի (եւ այլն) մեջ։

Այսպես օրինակ՝ որոշակի տեսակի արտադրանքի պահանջարկի անկման հետ կապված կորուստների ռիսկը նվազեցնելու համար.

✓ արդյունաբերական ձեռնարկությունը յուրացնում է եւ իրականացնում տարբեր տեսակի արտադրանքների թողարկում,

✓ շինարարական ֆիրման հիմնական աշխատանքների հետ իրականացնում է օժանդակ եւ ուղեկցող աշխատանքներ, ինչպես նաեւ կիրառում է միջոցառումներ, որոնք թույլ են տալիս արագ վերակողմնորոշվել այլ տեսակի շինարարական արտադրանքի թողարկման։

Բանկային ռիսկերի նվազեցման նպատակով դիվերսիֆիկացիայի օրինակներ են.

✓ առավել փոքր գումարներով վարկերի տրամադրում մեծաթիվ հաճախորդների՝ վարկավորման ընդհանուր ծավալը պահպանելով,

✓ տարբեր արտաբժույթներով արտաբժութային պահուստների ստեղծում՝ արտաբժութային մեկի փոխարժեքի անկման դեպքում կորուստների նվազեցման նպատակով,

✓ առավել փոքր գումարներով դեպոզիտային ավանդների եւ արժեթղթերի ներգրավում մեծ թվով ավանդատուների կողմից (եւ այլն)։

Ամբողջական տեղեկատվության առկայությունը ներդրողին հնարավորություն է տալիս նվազեցնել ռիսկը՝ լավագույն կանխատեսումը կատարելով։ Դա տեղեկատվությունը դարձնում է շատ արժեքավոր ապրանք, որի համար ներդրողը պատրաստ է մեծ փողեր վճարել։ Այդ պատճառով էլ տեղեկատվության մեջ կապիտալի ներդրումը դարձել է ձեռնարկատիրական գործունեության կենտրոն ոլորտներից մեկը։

Լիակատար տեղեկատվության արժեքը որոշելու համար գնահատվում են կոնկրետ ձեռքբերման սպասվող արժեքները՝ համապատասխանաբար կատարյալ եւ անկատար տեղեկատվության պայմաններում, իսկ լիակատար տեղեկատվության արժեքը որոշվում է որպես այդ սպասվող արժեքների տարբերություն։

Լիմիտավորումը ծախսերի, վաճառքի, վարկերի (եւ այլն) առավելագույն գումարների սահմանում է։ Լիմիտավորումը՝ որպես ռիսկի աստիճանի նվազեցման միջոց, բանկերը կիրառում են փոխառվածության տրամադրման դեպքում, տնտեսավարող սուբյեկտները՝ վարկային քարտերով ապրանքների ապառիկ վաճառքի դեպքում, ներդրողները՝ կապիտալի ներդրման գումարը որոշելու դեպքում (եւ այլն)։

Ապահովագրությունը ռիսկերի նվազեցման առավել տարածված միջոցներից է։ Ապահովագրության արդյունքում ռիսկը (պատասխանատվությունը բացասական հետեւանքների արդյունքների համար) որոշակի վարձատրության դիմաց փոխանցվում է մեկ ուրիշին, այսինքն՝ վնասը բաշխվում է ապահովագրության մասնակիցների միջեւ։ Առանձնացվում են ապահովագրության երեք բնագավառ. անձնական, գույքային եւ պատասխանատվության ապահովագրություն [9]։

Տնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգում գերադասելի տարածում են ստացել գույքային ապահովագրությունը եւ պատասխանատվության ապահովագրությունը։ Գույքային ապահովագրությունը ապահովագրության այնպիսի բնագավառ է, որտեղ որպես ապահովագրական հարաբերությունների օբյեկտ հանդես են գալիս գույքը (կառույց, սարքավորում, տրանսպորտա-

յին միջոց, հումք, կյուլներ, արտադրանք, գյուղատնտեսական անասունների գլխաքանակ, գյուղատնտեսական հողահանդե և այլն) ու գույքային շահերը:

Գույքային շահերի ապահովագրության առանձնահատուկ ձևերից մեկը (hedge, որը թարգմանաբար նշանակում է պաշտպանություն կորուստներից) ենթադրում է այնպիսի միջոցառումների համակարգ, որոնք թույլ են տալիս բացառել կամ սահմանափակել ֆինանսական գործառնությունների ռիսկերը, որոնք կապված են ապագայում արտադրության փոխանակարժեքի, ապրանքների գների, տոկոսարդյունքների (և այլն) անբարենպաստ փոփոխությունների հետ: Այդպիսի միջոցառումներ են արտադրության վերապահությունները, ֆորվարդային գործառնությունները, օպցիոնները (և այլն):

Ապահովագրության այս ձևը մեզանում գործնականում տարածված է: Օրինակ՝ ԱՄՆ-ում հումքի վերամշակման գծով մասնագիտացող ֆիրմաները ապահովագրում են եկամուտների կանխատեսվող մակարդակը ապահովագրության վերոնշյալ ձևով՝ մասնավորապես ֆյուչերսային պայմանագրերի միջոցով:

Ֆյուչերսային պայմանագրերում հաստատագրված գները կարող են տատանվել՝ շուկայում պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխությամբ պայմանավորված: Անորոշելի է նաև հետագայում գների և այլ պատճառով վերավաճառողների մոտ հետաքրքրություն են արթնացնում հումքային շուկաների և բորսաների նկատմամբ: Զանազան ֆյուչերսային պայմանագրերում գները երաշխավորված են, այդ պատճառով վերավաճառողները գնում են ֆյուչերսները և շուկայական գների աճի դեպքում դրանք վաճառում սպառողներին՝ ստանալով ավելի բարձր տարբերությունը կամ դրա մի մասը:

Պատասխանատվության ապահովագրությունը ապահովագրության այնպիսի բնագավառ է, որտեղ որպես օբյեկտ հանդես է գալիս պատասխանատվությունը երրորդ կողմի առջև՝ ապահովագրված անձի անգործության կամ որևէ ազդեցության հետևանքով կրան հասցրած վնասի համար:

ԱՄՆ-ում գիտատար թանկարժեք մշակումների դեպքում հաճախ ֆինանսական ռիսկի մի մասը փոխանցվում է այն ընկերություններին, որոնք ողջ նախագծի անհաջողության դեպքում ստանձնում են ֆինանսական կորուստների մի մասը (վեճուրային կամ ռիսկային ընկերություններ):

Գոյություն ունեն ռիսկի նվազեցման բազմաթիվ այլ ուղիներ, ինչպես՝ հսկողություն թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայության որակի նկատմամբ, ձեռնարկության անձնակազմի մանրակրկին ընտրություն, պայմանագրի կողմերի՝ կոնտրագենտների ստուգում, կնքվող տնտեսական պայմանագրերի ճիշտ ձևակերպում (և այլն) [10]:

● Ռիսկի պահպանումը՝ գոյություն ունեցող մակարդակի վրա, միշտ էլ, որ ենթադրում է հրաժարում վնասի փոխհատուցմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից, չնայած նման հնարավորություն նախատեսվում է (այսինքն՝ ռիսկ առանց ֆինանսավորման):

Հաճախ ձեռնարկությունը ռիսկային իրավիճակների բացասական հետեւանքները նվազեցնելու նպատակով իրականացնում է միջոցների պահեստավորում: Դա ենթադրում է, որ ձեռնարկատերը ստեղծում է վնասների փոխհատուցման առանձին ֆոնդեր՝ սեփական շրջանառու միջոցների մի մասի հաշվին: Վնասները ծածկելու նպատակով միջոցների պահեստավորումը հաճախ անվանում են ինքնապահովագրություն: Վերջինը տրամաբանական է, երբ ապահովագրվող գույքի արժեքը հարաբերականորեն մեծ է ամբողջ ընդհանուր գույքային և ֆինանսական պարամետրերի համեմատ:

Այսպես, մի քանի հարյուր լցանավեր ունեցող անդրազգային նավթային ընկերությունները ինքնաֆինանսավորում են կիրառում: Հաշվարկը շատ պարզ է և տրամաբանական. տարվա ընթացքում մեկ լցանավի կորուստը, ինչը քիչ հավանական է, ընկերության վրա ավելի էժան կնստի, քան բոլոր լցանավերի համար ապահովագրական վճարների վարձը:

Ինքնապահովագրության թերությունների շարքին կարելի է դասել կազմակերպչական լրացուցիչ ծախսերը, հնարավոր ռիսկի մակարդակի թերագնահատումը, ռիսկի ֆոնդի վրա տղաճի ազդեցությունը: Ռիսկի պահպանման ժամանակ իրականացվող միջոց-

առաջարկների շարքին կարելի է դասել արտադրության վերականգնման և վնասների փոխհատուցման համար վարկերի և փոխառությունների ստացումը, պետական դոտացիաների ստացումը (և այլն):

● Ռիսկի փոխանցման նպատակով իրականացվող միջոցառումները նշանակում են ռիսկի համար պատասխանատվության փոխանցում երրորդ կողմին՝ ռիսկի գոյություն ունեցող մակարդակի պահպանման դեպքում: Այս դեպքում կիրառվում են ռիսկի ապահովագրության հետևյալ տարատեսակները՝ համատեղ ապահովագրություն և վերապահովագրություն:

Ապահովագրվող օբյեկտի արժեքի անընդհատ ավելացման պայմաններում մեծանում է ապահովագրվող ռիսկերի էական կարեւորությունը: Այդ պայմաններում յուրաքանչյուր ապահովագրող իր համար սահմանում է ապահովագրության գումարի առավելագույն չափը, որը նա կարող է թողնել իր մոտ: Եթե ապահովագրության ենթադրվող գումարը գերազանցում է այդ առավելագույն չափը, ապա ապահովագրողը կարող է իր վրա վերցնել այդ գումարի միայն մի մասը՝ ապահովագրվողին իրավունք տալով ապահովագրվել չբավականացնող գումարի չափով, ուրիշ ապահովագրողների մոտ: Ապահովագրության այս ձևը կոչվում է համատեղ ապահովագրություն:

Ապահովագրության յուրօրինակ ձև է վերապահովագրությունը, որը ենթադրում է ռիսկի բաշխում (ռիսկի մի մասի փոխանցում)՝ ներգրավելով մեծ թվով գործընկերներ կամ ներդրողներ ռիսկային նախագծի մեջ:

Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրության նպատակը ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքային շահերի պաշտպանությունն է որոշակի իրավիճակների առաջացման դեպքում՝ ի հաշիվ ապահովագրական վճարներից ձեռավորվող դրամական ֆոնդերի: Ապահովագրության համակարգը կախված է աշխատանքի առանձնահատկությունից և ձեռնարկության մասնագիտացումից: Որոշ դեպքերում, եթե ռիսկը շատ մեծ է, ձեռնարկատերը կարող է խուսափել ռիսկից: Դա նշանակում է խուսափել ռիսկի հետ կապված միջոցառումներից:

Ռիսկի կառավարման ավարտական փուլում կատարվում է ընտրված ռազմավարության իրականացման արդյունքների ստուգում և ճշտում՝ հաշվի առնելով նոր տեղեկատվությունը: Ստուգման ժամանակ կառավարիչները տեղեկատվություն են տալիս առաջացած վնասների և դրանք նվազագույնի հասցնելու նպատակով կիրառված միջոցառումների վերաբերյալ: Ստուգման արդյունքում կարող են բացահայտվել ռիսկի մակարդակը փոփոխող նոր իրավիճակներ, այդ տվյալները փոխանցվում են ապահովագրական ընկերությանը, հսկողություն է սահմանվում անվտանգությունն ապահովող համակարգի աշխատանքի արդյունավետության նկատմամբ (և այլն):

Ռիսկերի առավել արդյունավետ կառավարման նպատակով ձեռնարկությունում պետք է լինի ռիսկի գծով կառավարիչ՝ ռիսկ-մենեջերի պաշտոն: Նա պետք է իմանա, թե ինչպես նվազեցնել հավանական ռիսկի աստիճանը մինչև առավել ցածր հնարավոր մակարդակ՝ միաժամանակ ապահովելով շահութաբերության նախապես տրված մակարդակների ձեռքբերումը: Բացի այդ, նա պետք է կանխատեսի ռիսկի բացասական հետեւանքների փորձգման հնարավորությունը նույնիսկ ձեռնարկության համար ամենաանբարենպաստ իրադարձության դեպքում: Ռիսկի նվազեցման գործում կարեւոր նշանակություն ունի ֆինանսների ճիշտ կառավարումը: Այստեղ առանցքային է ֆինանսների գծով կառավարիչի դերը:

Յուրաքանչյուր ձեռնարկատեր իր գործունեությունը սկսելու հենց առաջին պահից բախվում է կյուրաքանակ, հումքային, ֆինանսական, կադրային և այլ ռեսուրսների տեղաբաշխման ու օգտագործման վերաբերյալ որոշումների ընդունման ռիսկին: Բիզնեսում ռեսուրսների խելամուտ բաշխման հիմնական խնդիրը կապված է հավերժական խնդրի հետ. պահանջմունքները անսահմանափակ են, իսկ հնարավորությունները՝ սահմանափակ:

Այսպիսով, հավանական ռիսկի մակարդակը, աստիճանը նվազեցնելու նպատակով առաջարկում ենք ճշտությամբ կատարել հետևյալ կանոնները.

● Զպետք է խուսափել ռիսկից, այլ պետք է կանխատեսել այն և ձգտել նվազեցնել մինչև առավել ցածր հնարավոր մակարդակ:

● Գործը սկսելիս պետք է գնահատել, թե կորուստների ինչպիսի տեսակներ են առավել հնարավոր եւ հավանական գործարարության տվյալ տեսակում, ինչպիսին է դրանց սպասվող մեծությունը, որքան հաճախ դրանք կարող են ծագել:

● Առանձնապես չպետք է սարսափել կորուստներից, որոնց մեծությունը չի գերազանցում հաշվարկային սպասվող շահույթը, նման կորուստները սկզբունքորեն թույլատրելի են, բայց դրանք չպետք է լինեն շատ հաճախ, դրանց հավանականությունը պետք է եապես փոքր լինի մեկից:

● Սպասվող կորուստները, որոնք ծագման շոշափելի հավանականություն ունեն, եւ սպառնացող վնասները, որոնք եապես գերազանցում են շահույթը, պետք է զգաստացնեն ձեռնարկատիրոջը: Այս դեպքում անհրաժեշտ է ստեղծել ապահովագրության հատուկ պահուստային ֆոնդ եւ հստակ պատկերացնել, թե ինչպիսի արդյունքներից պետք է փոխհատուցվեն կորուստները՝ դրանց ծագման դեպքում:

● Եթե ձեռնարկատերը խիզախելով գնում է բավականաչափ հավանական կորուստների ռիսկի, որը զգալի գերազանցում է շահույթը եւ ի վիճակի է նրան ֆինանսական խոշոր վնաս հասցնել, ապա ձեռնարկատերը պարտավոր է ապահովագրել իրականացվող գործունեությունը: Ռիսկի ապահովագրությունը դրա նվազեցման լավագույն միջոցներից մեկն է, բայց այն կապված է նոր կորուստների հետ՝ ապահովագրական վճարների տեսքով, որոնք պետք է համապատասխանեն ձեռնարկատիրոջ կարողությանը: Կարելի է ապահովագրել գույքը, առեւտրային գործունեությունը, բեռների փոխադրումը, առողջությունը, կյանքը:

● Կրիտիկական ռիսկի առկայության դեպքում, համաձայն պայմանագրի, ցանկալի է ռիսկը բաժանել գործունեության բոլոր մասնակիցների միջեւ այնպես, որ համընդհանուր ուժերով հնարավոր լինի փոխհատուցել հնարավոր կորուստները:

● Պետք է խուսափել արեւտալի ռիսկի հետ կապված գործերից,

քանի որ այս կորուստները ձեռնարկատերն ի վիճակի չէ փոխհատուցել: Այսպիսի կորուստների հավանականությունը պետք է լինի այնքան փոքր, որ այն հաշվի չառնվի (գրոյին մոտ): Հակառակ դեպքում անթույլատրելի է նման գործ սկսելը:

Ռիսկի նվազեցման տարբեր մեթոդների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ռիսկի նվազեցման ուղղված յուրաքանչյուր միջոցառում ունի իր «գինը»: Գործնականում առավել արդյունավետ արդյունք կարելի է ստանալ միայն ռիսկի նվազեցման տարբեր մեթոդների համալիր օգտագործման ժամանակ:

Օգտագործված գրականություն

1. Гарантуров В., Экономический риск, М.: Дело и сервис, 1999.
2. Ареопар - м. Управление предпринимательскими рисками, http://www.areopar.ru/
3. Е. Гаїкова, А. Шубин, Сколько стоит эффективное управление?, Экономика и жизнь, 11.09.2002, #172.
4. Хохлов Н.В., Управление риском, Учебное пособие, 2001.
5. Любушкин Н.П., Лещева В.Б., Дьякова В.Г., Анализ финансово-экономической деятельности предприятия, Уч. пособие для вузов, Под ред. проф. Н.П. Любушкина, М.: ЮНИТИ - ДАНА, 2002, 471 с.
6. Устенко О.А., Теория экономического риска, К. 1997, с. 310.
7. Венциель Е.С., Теория вероятностей, М. 1999, с. 312.
8. Гранберг А.Г., Статистическое моделирование и прогнозирование, М. 1995, с. 220.
9. Глушенко В.В., Управление рисками. Страхование, М. 1999, с. 336.
10. Скамай Л.Г., Способы реакции коммерческой организации на возникающие в процессе осуществления предпринимательской деятельности риски, http://www.risk-management.ru/arhiv.htm
11. Lubatkin M., Rogers R., Systematic Risk and Shareholder Return: a Capital market, Academy of Management Journal, 1997, #4.

Շուկայական հարաբերություններին անցնելու նպատակով ՀՀ-ում սկսված տնտեսական բարեփոխումների գործընթացում, խոր անկման շրջանը հաղթահարելուց հետո, արդեն մեկ հնգամյակից ավելի արձանագրվում է երկնիշ տնտեսական աճ (աղյուսակ 1): Այդ միտումը շարունակվեց նաեւ 2007թ., եւ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը կազմեց 3139.4 մլրդ դրամ՝ 13.7%-ով գերազանցելով 2006թ. ցուցանիշը:

Տնտեսության կայուն զարգացումն այսօր առաջնահերթ խնդիր է անցումային տիպի տնտեսություններում, որտեղ բոլոր ուղղություններով միաժամանակ ներդրումներ կատարելու հնարավորությունները սահմանափակ են, իսկ լրացուցիչ միջոցների ստեղծման միակ աղբյուրը տնտեսական զարգացումն է:

Իրականացված համակարգային վերափոխումների արդյունքում այսօր Հայաստանն ունի տնտեսավարման ազատական արժեքային համակարգով կայացած, միջազգային կառույցների հետ համագործակցող, որոշակիորեն դիվերսիֆիկացված տնտեսություն: Տնտեսական ազատականության վարկանիշային դասակարգմամբ՝ «Կառավարությունից ազատականություն» ցուցա-

նիշով Հայաստանի մակարդակը 2007թ. համար գնահատվել է 91.6% (առավելագույնը՝ 100%): Երկրում մասնավոր հատվածի կայացումն է վկայում ՀՆԱ ցուցանիշում մասնավոր հատվածի բարձր տեսակարար կշիռը (այդ ցուցանիշը 2006թ. կազմել է մոտ 85%) [1, էջ 10-11]:

Վերափոխումների արդյունքում ձեռք բերված հաջողություններն ակնհայտ են, բայց երկրում շուկայական համակարգի լիարժեք կայացման համար գործող շուկայական ինստիտուտներն ունեն անբավարար մակարդակ: Որոշ կառույցներ՝ ֆորմալ գործունեության պատճառով, լիարժեք չեն իրականացնում այն խնդիրները, որոնց լուծման համար ձեռավորվել են:

Ստեղծված իրավիճակը ներքին շուկայի փոքր տարողության պայմաններում, մեծացնելով ռիսկի աստիճանը տնտեսության մեջ, եապես դժվարացնում է տնտեսավարող սուբյեկտների կողմից հիմնավորված արդյունավետ որոշումների ընդունումը, զսպում է տնտեսական առաջընթացը եւ մրցունակության մակարդակը:

Ժամանակակից տնտեսական պայմաններում տնտեսավարող սուբյեկտների համար մեծ վտանգ են անբարեխիղճ մրցակիցները

Ձեռնարկաճիւրապան ՌԻՍԿԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՅՆ ԵՎԱԶԵՅՄԱՆ ՌԻԴԻՆԵՐԸ

Հասմիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ